

Կոտայքի մարզպետը ներկա է գտնվել Արտավազ գյուղի մանկապարտեզի բացմանը

Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյանն այսօր ներկա է գտնվել Մեղրաձոր համայնքի Արտավազ վարչական շրջանի մանկապարտեզի բացման արարողությանը:

Հյուրերի շարքում էին նաև Մեղրաձոր խոշորացված համայնքի ղեկավար Կառլեն Հովհաննիսյանը, Արտավազի վարչական ղեկավար Ռեմ Հովհաննիսյանը, Մեղրաձորի վարչական շրջանների ղեկավարներ:

Մարզպետը ևս մեկ անգամ կարևորելով համայնքներում մանկապարտեզների առկայությունը՝ որպես նախադպրոցական կրթության ապահովման տեսանկյունից ՏԻՄ ղեկավարի պարտադիր խնդիրների լուծման փաստ, ընդգծել է, որ այս բնակավայրում նման լուսավոր և ժամանակակից լուծումներով կահավորված, անվճար հիմունքներով գործող մանկապարտեզի առկայությունը տեղական կառավարման արդյունավետ օրինակ է՝ միտված կայուն զարգացող համայնքում արժանապատիվ քաղաքացի դաստիարակելուն:

«Հեռավոր լեռնային գյուղերում չկա ավելի լավ տոն, քան մանկապարտեզների, մշակույթի տների, արվեստի դպրոցների հիմնումը, հագեցումը, կահավորումը և ամբողջությամբ նոր չափորոշիչներով համապատասխան միջավայրի ապահովումը: Այս մանկապարտեզը դրա վառ ապացույցն է: Մեր բոլորիս ցանկությունն է, որպեսզի մեր փոքրիկներն ամենավաղ հասակից քաղաքացիական դաստիարակություն ստանալու օրինակներ ունենան, այդ թվում նաև հեռավոր գյուղերում: Վստահ եմ, որ մանկապարտեզում նախադպրոցական կրթություն ստացող քաղաքացին ավելի գիտակից և պետականամետ է լինելու»:

Մարզպետը նաև Աշխատավորների միջազգային օրվա կապակցությամբ շնորհավորել է մանկապարտեզը կառուցողներին, նորոգողներին և մանկապարտեզի աշխատակիցներին, ում աշխատանքն այսօր է մեկնարկում:

Բացման հանդիսավոր արարողությունից հետո հյուրերը շրջել են մանկապարտեզում, ծանոթացել պայմաններին և հնարավորություններին:

Մանկապարտեզի սաները կարճատև ելույթներ են ունեցել հյուրերի համար:

Արտավազ գյուղը երկար տարիներ մանկապարտեզ չի ունեցել: 2014 թվականին համայնքի բյուջեի միջոցներով և «Սոս» Հիմնադրամի հատկացումներով գյուղում մանկապարտեզ է կառուցվել, սակայն չի գործել: Հետագայում ձեռք է բերվել նաև գույքը, իսկ վերջերս Մեղրաձոր համայնքի բյուջեի հատկացումներով ձեռք է բերվել նաև ներքին կահավորանքի և հարդարանքի համար անհրաժեշտ պարագաները:

Մանկապարտեզում առայժմ գործելու է 1 խումբ՝ 30 սանով՝ Արտավազ և Փյունիկ բնակավայրերից: